## Գարնան հրաւէրը

Ձմրան վերջն էր: Օր մը արեւը բարձրացաւ վեր ու աւելի ջերմ շողաց: Արեւին ժպիտովն ալ ծնաւ գարունը:

-Ծառե՞ր, ծաղիկնե՛ր, խոտե՛ր ու բոյսե՛ր, արթնցէ՛ք, արթնցէ՛ք, այս ինչքան քնացաք,- ըսաւ գարունը: Ես արդէն եկած եմ արթնցէ՛ք ու երկիրը զարդարեցէք կանաչով:

-Բարե՛ւ, քեզ, բարե՛ւ, սիրելի գարուն,- ըսին խոտերը եւ կանաչ դարձան:

-Բարե՛ւ, Բարե՛ւ,- ըսին ծաղիկներն ու ծառերը եւ սկսան աՀիլ ու ծաղկիլ:

-Օ՛, այս ի՛նչ լաւ է, որ եկար, սիրելի՛ գարուն, մենք թմրած էինք,- ըսին մեղուները եւ տզտզալով դուրս ելան իրենց փեթակներէն:

Դուրսը տաք էր: Թռչունները կ'երգէին: Մարդիկ կ'աշխատէին դաշտերուն եւ այգիներուն մէջ: Ամէն տեղ ծաղիկ էր ու կանաչ:

Մեղուները թռան մօտակայ խնձորենիի մօտ եւ խնդրեցին.

-Խնձորենի՛, ծաղիկներդ բա՛ց, որ հիւթդ քաղենք. մենք կարօտցած ենք ծաղիկներուն:

-Ափսո՛ս, շա՛տ ափսոս, որ իմ ծաղկելու ժամանակը չէ, գացէք բալենիին քով:

Մեղուները թռան դէպի բալենին:

-Բարո՛վ եկաք, ժի՛ր մեղուներ սիրունիկնե՛ր,- ըսաւ բալենին,- բայց իմ ծաղիկները դեռ քնացած են, վաղը եկէք:

Միւս կողմէն մեղուներուն կանչեց նշենին, որ իր վարդագոյն ծաղիկները արդէն բացած էր եւ լեցուած էր քաղցր հիւթով:

Մեղուները ուրախ ուրախ թռան դէպի նշենին:

**Բառեր**

**Շողալ**.- փայլիլ, ճառագայթել:

**Տզտզալ**, **տզզիւն**.- բզզիւն (ճանճի, մեղուի, մժեղի):

**Փեթակ**.- մեղուատուն:

**Այգի**.- խաղողի կամ ընդհանրապէս պտղատու ծառեր տնկելու տեղ:

**Բալ**.- կեռասին թթուաշ (թթու) տեսակը, ծառը `բալենի:

**Նշենի**.- նուշի ծառ:

**Հիւթ**.- պտուղներէ քամուած հեղուկ:

**Ժիր**.- աշխոյժ, աշխատասէր:

**<u>Հարցումներ</u>**

1.) **Տարուան ո՞ր ամիսը մենք կը հրաւիրենք Գարունը, եւ որ եղանակին վերջաւորութեան:**

Տարունա մարտ ամսվան մենք կը հրաաւիրենք գարունը և ձմռան վերջաւորութեան:

**2. )Ինչո՞ւ համար եկաւ գարունը, ի՞նչ նպատակով:**

-Ծառե՜ր, ծաղիկնե՛ր, խոտե՛ր ու բոյսե՛ր, արթնցէ՛ք, արթնցէ՛ք, այս ինչքան քնացաք,- ըսաւ գարունը: Ես արդէն եկած եմ արթնցէ՛ք ու երկիրը զարդարեցէք կանաչով:

**3. )ի՞նչ եղան խոտերը, ծաղիկներն ու ծառերը երբ գարունը տեսան:**

խոտերը եւ կանաչ դարձան: ծաղիկներն ու ծառերը եւ սկսան աճիլ ու ծաղկիլ:

**4.) Երբ տեսան գարունը Մեղուները ուրախացա՞ն, ի՞նչ ըրին:**
-Օ՛, այս ի՛նչ լաւ է, որ եկար, սիրելի՛ գարուն, մենք թմրած էինք,- ըսին մեղուները եւ տզտզալով դուրս ելան իրենց փեթակներէն:

**5.)Մեղուները ի՞նչ խնդրեցին խնձորենիէն:**

-Խնձորենի՛, ծաղիկներդ բա՛ց, որ հիւթդ քաղենք. մենք կարօտցած ենք ծաղիկներուն:

**6.)Վերջաւորութեան ո՞վ հրաւիրեց մեղուներուն եւ մեղուները ինչո՞ւ ուրախ էին:**

Միւս կողմէն մեղուներուն կանչեց նշենին, որ իր վարդագոյն ծաղիկները արդէն բացած էր եւ լեցուած էր քաղցր հիւթով:

նշենի

բալենի

բալենի

խնձորենի